

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԴԱՌՆՈՒԹԻՒՆ

Ամէն հայու սրտին մէջ կայ ահաւոր դառնութիւն:
Տարիներու թաւալին՝ ան մոռցած է քիչ առ քիչ
Ջարդ-մահերու վիշտը բոլոր, եւ վերքերու ցաւագին
Յիշատակներն իսկ դժխեմ: Ամէն հայու սրտին մէջ

Կը յամենան սակայն դեռ անջնջելի դառնութեան
Խորունկ հետքերն դժընդակ: Ժամանակի հրնոցին
Մէջ կարծես թէ յամբարէն վերածուած են վերք ու ցաւ
Սրտակեղեք դառնութեան, եւ մենք անգոր վրկաներ

Մեր վիշտերուն բազմածին, եւ անտարբեր աշխարհին
Եւ դաւանա՛ն ազգերու՝ դէմ կեցած ենք յուսակտուր:
Մեծ, նիւթապաշտ, շահագէտ, ազգեր որոնք խաբեցին
Մեզ ըսկիզբէն մինչեւ վերջ, ի շահ իրենց, եւ ի շահ

Ցեղասպանին անուղղայ, մեղսակցութեամբ դրոնփակ.
Ուրեմն ինչո՞ւ եւ ինչպէ՞ս հայու սիրտերը բոլոր
Զրլլան լեցուած դառնութեամբ, անմարդկային ազգերու՝
Դէ՛մ իսկ ամբողջ աշխարհի արդարութեան այս ծաղու:

ԱՆԵԼ